«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Հաստատություն՝ Տավուշի մարզ, «Սարիգյուղի մանկապարտեզ»

Դաստիարակ՝ Սոֆյա Ղազարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023 թ.

Բովանդակություն

Ներածություն ……..…… 3

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ,

ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասի …… 4

Նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները …. 5

Չափորոշչով սահմանված առանցքային կարողունակությունները …… 5

Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները ……...…. 8

Պլան …… 13

Եզրակացություն …… 14

Գրականության ցանկ …… 15

Ներածություն

Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիրը կազմված է ՀՀ կառավարության կողմից հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջների հիման վրա (13.05.2021 թ. N 744-Ն որոշում) այդ տարիքի սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողությունների վրա հիմնված մոտեցումն է :

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Նախադպրոցական տարիքային խմբերում անցկացվում են կերպարվեստի հետևյալ պարապմունքները՝ նկարչություն, ծեփ, ապլիկացիա, և կառուցողական աշխատանք: Նախադպրոցական տարիքի սանի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունքն է, որքան խաղը: Նկարչությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհընկալումը:

Նկարչության ընթացքը, որով երեխան արտահայտում է իր սերը, հակումները, հույզերն ու տրամադրությունը՝ պատկերված թղթի վրա, երեխային ձերբազատելով լարվածությունից և հանգստություն պարգևում:

«Կերպարվեստ, կառուցողական աշխատանք» ծրագրային բաղադրիչը նպաստում է կրտսեր նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացման և զգայական փորձի հարստացմանը: Այն ուղղված է սանի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սաները ծանոթանում են արվեստի տարրական արտահայտչամիջոցներին (գույն, ձև,

շարժում), զարգանում է հետաքրքրությունը ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստի նկատմամբ։

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ
ՀՀ օրենքը նախադպրոցական կրթության մասին

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են։ Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով։
Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան։ Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը։

Չափորոշչով սահմանված առանցքային կարողությունները

1. Լեզվական և հաղորդակցական
2. Ճանաչողական և մոտիվացիոն
3. Ինքնաճանաչողական և սոցիալական
4. Ժողովրդավարական և քաղաքացիական
5. Թվային և մեդիա
6. Մշակութային
7. Մաթեմատիկական և տեխնիկական
8. Տնտեսական
9. Ֆիզիկական կուլտուրայի

Լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝

Երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք:

Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝

Երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է

սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ:

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին:

Թվային և մեդիա կարողունակություն՝

Երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները:

Մշակութային կարողունակություն՝

Երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու

ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները:

Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝

երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ

Տնտեսական կարողունակություն

Երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձին երևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրևի, մառախուղի ժամանակ: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում

Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն

Երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Կերպարվեստային գործունեությունը նախադպրոցականների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Այն իրականացվում է նկարչության, ապլիկացիայի, ծեփի, կառուցողական նյութերով պարապմունքների գործընթացում: Կերպարվեստային պարապմունքների նպատակն է զարգացնել երեխայի ստեղծագործական և կառուցողական մտածողությունը, գեղագիտական ընկալումները, ինչպես նաև լուծել հետևյալ կարևորագույն խնդիրները.

- սովորեցնել տեսնել, զգալ շրջապատող աշխարհը,
- հարստացնել զգայական փորձը՝ տեսնելու, լսելու, շոշափելու զգացողությունը
- կարողանալ բնութագրել առարկաները՝ ըստ գույնի, ձևի, չափի
- ծանոթացնել լայնության, բարձրության, մեծության հասկացություններին
- զարգացնել առարկաները և երևույթները տեսնելու, դիտելու համեմատություններ և վերլուծություններ կատարելու, դրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը:

Կերպարվեստային պարապմունքների առջև դրված խնդիրները կարելի է իրականացնել նաև ոչ ավանդական նկարչության տարբեր տեխնիկաների միջոցով: Ոչ ավանդական նկարչական գործունեության մեջ երեխան ազատ է նյութերի և միջոցների ընտրության մեջ: Այն հնարավորություն է տալիս ծանոթանալու առարկաների և երևույթների պատկերման ոչ ստանդարտ ձևերին: Աշխատելով տարբեր արտահայտչամիջոցներով՝ գունավորած մատիկներով, ճմռթված թղթով, հաստ վրձնով, փրփրապլաստով, կարտոֆիլով, սպունգով, խցանով, տերևով, օճառի պղպջակներով, խմորով, ձվի կեղևով և այլ միջոցներով: Նշված տարբերակները երեխան կիրառում է տարբեր նյութերի՝ ծառի, տերևի, գունավոր կամ սպիտակ թղթի, փուչիկների մակերեսների վրա՝ ստանալով հարթ և անհարթ մակերեսներ:

Ձևերի և միջոցների բազմազանությունը ստիպում է փոքրիկին հաղթահարել հանդիպող խոչընդոտները և անընդհատ հորինել ինչ-որ բան: Նկարչության այս տեսակը հնարավորություն է տալիս ընդլայնելու երեխաների պատկերացումները տարբեր նյութերի այլընտրանքային նշանակության և դրանք որպես գեղարվեստական արտահայտչամիջոց կիրառելուն:

Կերպարվեստային պարապմունքների ընթացքում կիրառելի են նաև խաղեր և վարժություններ, որոնք ներառում են կերպարվեստային գործունեության բաղադրիչներ: Առաջարկվող խաղ-պարապմունքների նպատակն է՝ օգնել երեխաներին հետաքրքիր, ուրախ և աշխույժ մթնոլորտում մասնակցել

կերպարվեստի պարապմունքներին։ Անհրաժեշտության դեպքում դաստիարակը կարող է իրականացնել համապատասխան փոփոխություններ։ Կերպարվեստային պարապմունքների հետաքրքիր, ուրախ և բովանդակալից կազմակերպումն ունի հետևյալ ուղղվածությունը.

- ապահովել երեխայի ակտիվ շփումը տարբեր նյութերի հետ
- սովորեցնել գիտակցված կատարել նույնանման և ստեղծագործական աշխատանքներ
- նպաստել ձեռքի հմտության զարգացմանը։

Նախադպրոցականների համար հետաքրքիր է նաև նկարելու գործընթացն իրականացնել հանելուկներով, հեքիաթի կամ ոտանավորների ընթերցմամբ։ Այս դեպքում, կարծես թե, երեխան ներգրավվում է «խաղի» մեջ, դառնում է ակտիվ մասնակից ինչ-որ նոր բանի ստեղծմանը, նա պատասխանում է իր ստեղծած գունավոր պատկերով, ունենում է դրական հույզեր, որի միջոցով էլ հեշտությամբ հաղթահարում է նկարելու գործընթացը։

Շատ կարևոր է նկարելու ընթացքում հետևել երեխայի ձեռքի շարժումներին, անհրաժեշտության դեպքում փոխել ձեռքի և դաստակի մանր մկանային համակարգը՝ մոտորիկան, ձեռքի շարժումների, ռիթմի պահպանման ունակությունը, համակարգում է աչքի և ձեռքի շարժումները, զարգանում է ուշադրությունը՝ մատիտի թողած հետքի և ձեռքի համաչափ շարժումների վրա։

Կրտսեր 2-րդ խմբի՝ 3-4 տարեկան նախադպրոցականների համար ուսուցման գործընթացին ներկայացվող ծրագրային պահանջներն են՝ պահպանել մատիտանկաչության և վրձնանկարչության միջոցով նկարչական գործունեության ուսուցման սկզբունքները և մեթոդները, շարունակել համատեղ նկարչությունը, կիսատ թողած նկարի շարունակությունը, ինքնուրույն նկարչությունը, կետերի միացումը։ Այս տարիքային խմբում ներառվել են գործունեության հետևյալ տեսակները՝ առարկայական, բնօրինակից, դեկորատիվ, թեմատիկ, ստեղծագործական և ոչ ավանդական։

Նկարչական գործունեության տեսակները

Առարկայական նկարչության ուսուցումը հիմնվում է նախնական դիտումներից ձեռք բերած գիտելիքների վրա, նպատակն է երեխաների մեջ ձևավորել ճիշտ պատկերացումներ առարկայի ձևի, չափի, գույնի, կառուցվածքի, մեծության և այլ հատկանիշների վերաբերյալ: Այսինքն առարկա նկարելը համարվում է դիտողական ուսուցման ձև, որի ժամանակ երեխայի գիտակցության մեջ մտապահվում են առարկայի ձևը, չափը, կառուցվածքը և գույնը:

Բնօրինակից նկարչությունը բնական օրինակի նկարելն է, և որպես բնօրինակից նկարվող նմուշ պետք է դրվի, որքան հնարավոր է, երեխայի տեսադաշտին մոտ: Սովորաբար, մինչև նկարելը, երեխան պետք է խաղա նկարվող առարկայով, շոշափելով ըմբռնի առարկայի ձևը, մեծությունը, չափը, կատարի նմուշի վերլուծություն: Նման դեպքում երեխայի պատկերացումները առարկաների նկատմամբ ավելի քան պատկերավոր են դառնում:

Դեկորատիվ նկարչության գործընթացում երեխան սովորում է դեկորատիվ նախշի պատկերման պարզագույն տարրերը: Ծանոթանում է դեկորատիվ նախշի ստեղծման պարզ ձևերին, նկարում է ուղիղ, ալիքաձև գծեր, շրջաններ, դրանք ճիշտ տեղադրում թղթի մակերեսին, անհրաժեշտ է, որ նախշ պատկերելիս պահպանի նախշի ռիթմը (երկար-կարճ, բարձր-ցածր, լայն-նեղ) և գունային ներդաշնակությունը:

Թեմատիկ նկարչությունը սովորեցնում է նկարել թեմա: Բնականաբար, այս տարիքում ընտրված թեմաները պետք է լինեն շատ պարզ և անհրաժեշտության դեպքում ցուցադրվեն նմուշօրինակները: Այդ թեմաները կարող են լինել «Մեր բակը», «Մայրիկի տոնը», «Աշուն» և այլն:

Երեխան աստիճանաբար սովորում է տեսնել, որ իրենց բակի ծառերն ավելի մեծ են, քան հեռվում երևացող ծառերը, որոնք փոքր են երևում: Ստեղծագործական նկարչության ժամանակ երեխան նկարում է նախկինում ունեցած տեղեկություններից, դիտած մուլտֆիլմերից, ծանոթ հեքիաթներից, և հենց սա էլ հիմք է հանդիսանում, որ իր երևակայական մտքերը և պատկերացումները թղթին հանձնի ստեծագործական տարրերով:

Ոչ ավանդական նկարչությունը սովորաբար կազմակերպվում է խաղի մեթոդով, որը երեխային պարգևում է ուրախություն, զվարճանք, ինքնագոհություն։ Այս տարիքային խմբում ավելի հաճախ կարելի է կիրառել հետևյալ միջոցները՝ մատիկները, շտամպեր, թելեր, սանրեր և այլն։

Մատնանկարչություն և վրձնանկարչություն

Արդեն իսկ 3-4 տարեկան երեխան ծանոթ է մատիտին և նրա հնարավորություններին։ Երեխան կարողանում է ինքնուրույն բռնել մատիտը, կատարել պարզ վարժություններ։ Հենվելով երեխայի ունեցած նկարչական կարողությունների վրա, նախատեսված ծրագրային վարժությունների միջոցով պետք է շարունակել սովորեցնել, խորացնել, հմտեցնել ձեռք բերվածը։ Շարունակել նկարել կետեր, գծեր, աղեղներ, կոր գծեր, ալիքաձև գծեր, հորիզոնական և ուղղահայաց գծեր, մեծ և փոքր տարբեր չափերի շրջաններ, գունավորել պատկերներ։ Մատիտի թույլ և ուժեղ սեղմումներով տանել տարբեր գծեր՝ հաստ և բարակ, կարճ և երկար, ուղիղ, թեք, կարճ գծեր, վերևի ձախ անկյունից դեպի ներքևի աջ անկյունը և հակառակ ուղղությամբ, գունավոր թղթի վրա նկարել տարբեր գույներով։ Երեխան պետք է հասկանա իր նկարած պատկերի որոշակի իմաստը, նկարի լույսը և ստվերը։

Վրձնով նկարչությունը սկսելուց առաջ երեխայի ուշադրությունը պետք է հրավիրել նստած դիրքի, նկարչական պարագաներից ճիշտ օգտվելու կանոններին, նկարելու ճիշտ տեխնիկայի՝ վրձնահատվածների, վրձնահպումների կատարմանը, տանել գծեր ազատ և վստահ, նկարել գծեր, բծեր, շրջանաձև պատկերներ, ուղղանկյուններ, մեծ և փոքր առարկաներ, բնության երևույթներ։

Նախընտրելի է, որ այս՝ 3-4 տարիքային խմբի երեխաներն աշխատեն հաստ վրձիններով, քանի որ հատ վրձնով նկարված պատկերներն առավել պատկերավոր են, վառ և տպավորիչ։ Վրձնանկարչության միջոցով երեխան հեշտ է յուրացնում թղթի մակերեսը։

Երեխան ազատ է գույների ընտրության մեջ, խաղալով գույներով և ստանալով նոր գույներ՝ նրա մոտ զարգանում է գույնի ընկալումը և գույնի զգացողությունը, պարգևում ուրախություն և զվարճանք։

Ցուցում ձախլիկներին

Ձախլիկները նկարում են ձախ ձեռքով։ Հետևաբար, եթե խմբում կան ձախլիկներ, ապա նրանց չպետք է արգելել, այլ պետք է թույլ տալ և օգնել, որ աշխատեն ձախ ձեռքով։ Դաստիարակը պետք է սովորեցնի մատիտը ձախով բռնելու և նկարելու ձևերը։

Ձախ ձեռքով աշխատող երեխաները պետք է պահպանեն մատիտով աշխատելու կանոնները։ Այսպես՝

- ✓ ձախլիկների մատիտի գլխիկը պետք է նայի արմունկին (աջլիկի մատիտը պետք է նայի ուսին կամ ուղիղ)։
- ✓ Նկարելու ընթացքում ձախ ձեռքի վերջին 2 մատները պետք է հենվեն թղթին։
- ✓ Ձախլիկը պետք է նստի սեղանի ձախ անկյունում։

Սովորաբար ձախլիկները նկարում են այն ձեռքով, որն առավել հարմար է իրենց։

Պլան

Կերպարվեստային գործունեություն

Նկարչություն (տարատարիք խումբ)

Թեմա՝ «Նկարչություն տերևով» (ոչ ավանդական նկարչություն՝ տերևի միջոցով)

Նպատակ՝ շարունակել երեխաներին ծանոթացնել ոչ ավանդական նկարչական տեխնիկաներին՝ տերևներով։

Պատկերը ստանալ տերևի հպման միջոցով։ Զարգացնել երևակայությունը, գունազգացողությունը։ Պարգևել՝ ուրախություն, զվարճանք, ինքնագոհություն։ Կատարելագործել տարբեր տեխնիկաներով աշխատելու հմտությունը։

Աշխատանքի տեխնիկան՝ տերևի հակառակ կողմը թաթախել ջրաներկի (գուաշի) մեջ և տպել թղթի վրա՝ ստանալով տպված տերև՝ իրենց նախընտրած աշնան գույներով։

Կարելի է աշխատել մեծ և փոքր տերևներով։

Վերջնարդյունք՝

- կիրառի ոչ ավանդական նկարչական տեխնիկաներ
- պահպանի ճիշտ կեցվածք նկարելու ընթացքում
- խնամքով օգտագործի նկարչական նյութերը
- կոկիկ պահի աշխատանքը։

Եզրակացություն

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը միտված է երեխաների իրավունքների պաշտպանությանը, կրթության որակի բարձրացմանը, համընդհանուր ներառմանը, սահուն անցմանը դպրոցին և հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմք։

Չափորոշիչը նորմատիվ է, որին համապատասխան կիրառվում է նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործընթացում։

Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող ուսուցման պահանջներում ունի ուսուցողական և ճանաչողական նշանակություն՝ հնարավորություն տալով ծանոթանալ նկարչական միջոցներին։ Պարապմունքները ներկայացված են այնպիսի բնույթով, որը հնարավորություն է տալիս նաև ներկայացված առաջադրանքների կատարմանը հեշտությամբ ինտեգրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաներին։

Գրականության ցանկ

1. Կերպարվեստ «Սովորում ենք նկարել 3-4 տարեկանում», Ժ. Ավետիսյան, մեթոդական ուղեցույց, Էդիթ Պրինտ, 2020 թ.
2. Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան, ուսումնական մեթոդական ձեռնարկ, 2016 թ.
3. ՀՀ օրենք նախադպրոցական կրթության մասին 2020 թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=142606
4. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, 2021 թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575